

«Խարաճ», ի մը պատճառաւ: Յակոբ Կար-
նեցի իւր գրած միջոցին՝ ԺԷ դարուն վեր-
ջին քառորդին՝ տակաւին կրնար ուրախա-
նալ թէ գոնէ Հայոց միւս մասը «մնացին
ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Բրիս-
տոսի եւ աղօթիւք Ս. Լուսաւորչին», (անդ):
Բայց կարգը պիտի գար անոնց ալ՝ եւ
բռնի մահմետականացումը հոս ալ. մեծ
ծաւալ պիտի առնուր ոչ միայն ԺԸ դարուն
ընթացքին մէջ, այլ նաեւ ԺԹ դարուն,
ինչպէս յիշեցինք արդէն Բցխայի 800 տուն
Հայոց պարագան:

Թէ այս հալածանաց տուն եւ թէ
1828 ի գաղթի ժամանակ՝ նաեւ այս ձո-
րերէն վրախած եւ գաղթած են շատերը:
Երբ Բոխ Նառիմանէ (հին Մամուլան)
կ'անցնէր, այս գառառիս շատ զիւղերը
լքեալ ամայի մնացած էին, եւ «եթէ ոռոս-
թուրք ուղմաճակատը ներկայացընող քար-
տէսը նկատենք, պիտի գտնենք հոն բազ-
մութիւն մը զիւղերու, որոնք այժմ միայն
անուամբ զոյու թիւն ունին», (Բոխ, էջ 261):
Ասի արդիւնք էր նաեւ Տայոց գաւառաց
մահմետականացած կէս-անկախ իշխանաց
ապստամբութեան մը, (որուն մէջ զլիաւ-
որ դեր ունէին Արդուինի եւ Օլթիի աէ-